

Եկէք ինձի, բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ...
Մատթէոս 11.28

ԲԱՐԻ ԼՈՒՐ

Սեպտեմբեր 2018թ.
№8 (103)

Լույսն է լրատված 2009թ. մայիսից

ՍԻ՛ՀՈՒՍԱՀԱՏՎԻՐ

ՀԱՆՁՆՎԻ՛Ր ՇՆՈՐՀԱՑ ԽՈՍՔԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՏՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ

ԲԱՐԻ ԼՈՒՐ

ԱՄՍԱԳԻՐ

Լույս է տեսնում 2009թ. մայիսից

Սեպտեմբեր, 2018թ. N8 (103)

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱՑԵՔ

Հրահատ Ամիրբեկյան
Մի՛ հուսահատվիր.....1

Վրեժ Սաֆոյան
Հանձնվի՛ր Ծնորհաց Խոսքին.....2

Պյուր Կովալենկո
Մեկտեղ հավաքվելը մի՛ յգնք.....7

Վերջին սրուգումը.....8

Բժշկություն.....10

Մոր աղոթքը փրկել է մի ողջ քաղաք.....14

Իմաստուն ծերունին.....15

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք աղոթել, որ թերթի միջոցով տարածվի Ավետարանի Բարի Լուրն ու ցանվեն ճշմարտության սերմերը, որպեսզի մարդիկ դառնան Աստծուն և հավիտենական կյանք ունենան:

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք ձեր դիտողությունները, առաջարկությունները, նվիրատվությունները ուղարկել խմբագրություն: Մենք սիրով հաշվի կառնենք ձեր արձագանքները: Հեռ.՝ 093-532-526, 093-954-930

ՄԻ՛ ՀՈՒՍԱՀԱՏՎԻՐ

Սիրելինե՛ր, ցավով ուզում եմ փաստել, որ այսօր շատ ու շատ ընտանիքներ քայքայվում են, մարդիկ ինքնասպան են լինում, շատերը մոլորված են ու չգիտեն, թե ուր են գնում: Այս ամենը խոսում է վերջին ժամանակների մասին, և այս ամենի մասին գրված է Աստծու Խոսքի՝ ճշմարտության գրքի մեջ: Բայց ես մի բան եմ ուզում ասել, սիրելի՛ Աստծու զավակ. որքան էլ դու խորասուզված ու խորացած լինես մեղքի մեջ, որքան էլ քո կյանքը խորտակված լինի, Աստված կարող է քեզ կանգնեցնել, Նա ամենակարող է: Եթե դու այսօր բաժանված ես քո ընտանիքից, հեռացած ես քո երեխաներից, եթե դու այսօր այս երկրի վրա չես գտնում մխիթարություն, ապա հիշի՛ր, Տեր Հիսուսն ասաց, որ Ինքը գնում է, որպեսզի մեզ ուղարկի Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին: Այդ Հոգին կլինի մեզ հետ, մեզ վրա և մեր մեջ:

Սիրելի՛ ժողովուրդ, հավիտենական կյանքը ձրի պարգև է, Աստծու կողմից նվեր. «Քանզի մեղքին վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգևը յաւիտենական կեանք մեր Տէրոջ Յիսուս Քրիստոսի ձեռքով» (Հռովմ. 6:23) բոլոր նրանց համար, ովքեր հավատում ու ընդունում են Աստծու Խոսքը: Եթե դուք ընդունեք ու հավատաք, ձեր կյանքում հրաշք կկատարվի, մահը կփոխվի կյանքի, խավարը՝ լույսի: Վառ օրինակ է խաչի վրայի ավազակը: Նա իր ամբողջ կյանքում ավազակ էր եղել և ահա խաչի վրա մեռնում էր: Նա իր արժանի դատապարտությունն էր կրում, ինչպես և ինքը դա ասաց: Բայց երբ նա դիմեց Տեր Հիսուս Քրիստոսին. «Տե՛ր, յիշէ զիս, երբ քու թագաւորութիւնովդ գաս», Հիսուսն ասաց. «Ճշմարիտ կըսեմ քեզի. դուն այսօր ինձի հետ դրախտի մեջ պիտի ըլլաս» (Ղուկ. 23:42-43):

Մենք տեսնում ենք, թե ինչպես Աստծու Որդու շնորհքը այդ ավազակի ներսում քանդեց սատանայի բոլոր ծրագրերը, և մահը փոխվեց կյանքի. ավազակը ստացավ հավիտենական կյանք և Հիսուսի հետ եղավ դրախտում:

Սիրելինե՛ր, մի՛ նայեք սատանայի ստին: Որքան էլ դուք խորասուզված լինեք մեղքի մեջ, որքան էլ հեռացած լինեք Աստծուց, որքան էլ ծանր լինի ձեր վիճակը, միշտ հիշե՛ք, որ Աստված անսահման ավելի մեծ է, քան ձեր պատկերացումները Նրա մասին: Նա վեց օրում ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովն ու ցամաքը, բուսական ու կենդանական աշխարհը, և այդ բոլորը այսօր մեր աչքերը տեսնում են: Սիրելինե՛ր, մոտենում են վերջին ժամանակները, մարդիկ մնում են միայնակ, նրանք փորձում են կենդանիներ պա-

հելով լցնել իրենց միայնությունը, հոգեկան դատարկությունը: Բայց ոչ մի կենդանի չի կարող լինել քո ընկերը, ոչ մի բանով հնարավոր չէ լցնել այդ դատարկությունը: Քո ընկերը միայն ու միայն Հիսուս Քրիստոսն է, որ քեզ համար խաչվել է: Սիրելի՛ս, դիմի՛ր Նրան, աղոթի՛ր Նրան: Նա կարող է հենց այսօր փոխել քո կյանքը: Եթե դու այսօր մահիճի մեջ ես, հիշի՛ր, որ եթե դիմես Աստծուն, Նա կարող է խավարը լույսի փոխել, Նա կարող է քո երկար տարիների հիվանդությունը բժշկել մեկ ակնթարթում, եթե դու հավատաս: Հիշի՛ր կույր Բարտիմեոսին, հիշի՛ր ավազանի մոտ գտնվող երեսունութ տարվա հիվանդին...

Թող Աստված օգնական լինի, սիրելինե՛ր, որպեսզի ձեր մեջ լինի հույս, և այդ հույսը երբեք չկորչի ձեր միջից: Մի՛ մոռացեք, որ Աստված լույս է, Նա սիրում է ձեզ և ուզում է, որ դուք բժշկվեք ու լինեք երջանիկ թե՛ այս երկրի վրա և թե՛ ապագայում: Փառք Տիրոջը: Ամեն:

Հրահապ Ամիրբեկյան

ՀԱՆՁՆՎԻ՛Ր ՇՆՈՐՀԱՑ ԽՈՍՔԻՆ

Գործք Առաքելոց 20:32-ում կարդում ենք. «Եվ հիմա, եղբայրներ, կը յանձնեմ ձեզ Աստուծոյ ու Անոր շնորհաց խօսքին, որ կարող է շինելու և բոլոր սրբուածներուն հետ ձեզի ժառանգութիւն տալու»: Աստված ուզում է, որ մենք նույնպես հանձնվենք Իր շնորհաց խոսքին: Ոմանց մոտ կարող է հարց առաջանալ, թե՝ էլ ո՞ւմ կարելի է հանձնվել, եթե ոչ Աստծու Խոսքին: Իհարկե, մենք կարող ենք մտքով հասկանալ դա, բայց իրական կյանքում տեսնում ենք, որ մարդիկ ավելի շատ հանձնվում են պրոբլեմներին, քան Աստծու Խոսքին: Մի փոքր պայքարում ենք, տեսնում ենք, որ պրոբլեմը չի զիջում իր դիրքերը, և հանձնվում ենք պրոբլեմներին: Ոմանք հանձնվում են հիվանդություններին, սատանայից եկող մտքերին, հակառակորդի տարբեր հնարքներին ու չեն կարողանում ուշքի գալ: Բայց Սուրբ Հոգին կարող է բժշկել մեզ ու հանել այդպիսի վիճակներից: Աստծու զավակը պետք է վարժվի հանձնվելու Աստծու Խոսքին: Կլինեն շատ գայթակղություններ, ցանկություններ, հրապուրանքներ, սակայն մենք չպետք է հանձնվենք նրանց, այլ պետք է հանձնվենք Աստծու շնորհաց խոսքին: Տեր Հիսուսն ասաց. «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը»: Եթե դու հավատում ես, որ Կյանքը Հիսուսն է, այդ դեպքում դու հանձնվում ես Աստծու շնորհաց խոսքին ու հակառակ կենում սատա-

նայի հրապուրանքներին: Այդ դեպքում սատանան փախչում է քեզնից:

Երբ քո առջև պրոբլեմներ են, անբուժելի հիվանդություններ, դժվարություններ, դու, անկախ այդ ամենից, հանձնվի՛ր Աստծու Խոսքին: Մեր ցավերը և հիվանդությունները Տեր Հիսուսն Իր վրա է վերցրել, և Նրա վերքերը ապացույց են մեր բժշկության:

Սիրելինե՛ր, բոլոր ժամանակներում Աստծու մարդիկ հանձնվել են Աստծուն և Նրա շնորհաց խոսքին: Հանձնվել Աստծու Խոսքին՝ նշանակում է **հավատալ և ապավինել** Նրա շնորքին: Եսայի 40:30-31-ում կարդում ենք. «Երիտասարդները անգամ պիտի յոգնին և թուլնան, և ընտիր կտրիճները բոլորովին պիտի իյնան, բայց Տէրոջը ապաւինողներուն ոյժը պիտի նորոգուի, և անոնք արծիւներու պէս թեւերով վեր պիտի ելլեն, պիտի վազեն ու չթուլնան, պիտի քալեն ու չյոգնին»:

Սիրելինե՛ր, ինչի՞ց է, որ նույն հավաքույթի ժամանակ, երբ Սուրբ Հոգին գործում է, իրար կողք նստած երկու հոգիներից մեկը բժշկվում է, իսկ մյուսը՝ ոչ: Ինչո՞ւ, ո՞րն է արգելքը: Մենք հաճախ արգելքը փնտրում ենք մեղքերի, տկարությունների մեջ, բայց բուն արգելքն այն է, որ մարդը Աստծու Խոսքին չի վստահում, չի ապավինում: Եթե դու Աստծու Խոսքին չես ապավինում, Տիրոջը չես հանձնվում, ուրեմն տեղ չես տալիս, որ Սուրբ Հոգին գործի: Միգուցե դու սատանային ես տեղ տվել, դրա համար էլ նա իր մտքերով է ազդում քեզ վրա: Պետք է Աստծուն տեղ տալ, չէ՞ որ Հիսուսն ասում է, որ Ինքը դուռը թակում է, և եթե մեկը դուռը բանա, Ինքը կմտնի և նրա հետ ընթրիք կանի: Նշանակում է՝ դու պետք է բացես դուռը, որ Նա ներս մտնի: Տեղ տալ՝ նշանակում է վստահել Տիրոջ խոստումներին: Եթե սատանան վախի ու սարսափի մտքեր է բերել, միևնույնն է, դու հանձնվի՛ր Աստծու Խոսքին: Բարի Հովիվն Իր գառանը գայլին չի տա:

Իսկ ե՞րբ Սուրբ Հոգին չի գործում մարդու կյանքում: Մատթ.13:58 խոսքն ասում է. «Հոն շատ հրաշքներ չըրաւ անոնց անհաւատութեան համար»: Անհավատություն՝ նշանակում է, որ դու Աստծու Խոսքին չես վստահում, չես ապավինում: Դու կարող է հավատաս, որ Աստված կա, Նա է ստեղծել երկինքն ու երկիրը, բայց չհավատաս, որ Նա քեզ հավիտենական սիրով է սիրում: Երբ դու նայում ես պրոբլեմներին, տեսնում ես, որ աղոթքի պատասխանն ուշանում է, սկսում ես կասկածել Նրա Խոսքին: Դրա համար, սիրելինե՛ր, հորդորում ենք, որ ամբողջությամբ վստահեք Աստծու Խոսքին: Հիսուսը հրաշքներ ու բժշկու-

թյուններ չարեց այն ժամանակ, երբ մարդիկ չէին հավատում: Հրաշքը կամ բժշկությունը չի կատարվում մարդու արդարության համար, այն կատարվում է Աստծու խոստումների հիման վրա: Սիրելինե՛ր, մենք պետք է ճանաչենք այս ճշմարտությունը: Եվ երբ որդու հենվում ես այդ խոստումներին, ապավինում ես ու հանձնվում Աստծուն, այդ ժամանակ Նրա խոստումները հաստատվում են հրաշքներով, նշաններով ու բժշկություններով: Դուք պետք է աղոթեք, որպեսզի սա բացվի ձեզ, որ բոլոր վիճակների մեջ հանձնվեք միմիայն Աստծու Խոսքին: Չարին, մեղքի գայթակղություններին, բոլոր տեսակի վիճակներին կարելի է հաղթել միայն Աստծու Խոսքով: Մենք շատ հաճախ խեղճանում ենք, թմրում ենք, սառում ենք, որովհետև հանձնվում ենք ոչ թե Աստծու Խոսքին, այլ պրոբլեմին, երևույթին, հիվանդությանը, մտքերին, այդ պատճառով էլ հուսահատվում ենք ու լցվում վախերով: Մենք պետք է հանձնվենք ոչ թե վիճակին, այլ Աստծու Խոսքին:

Սիրելինե՛ր, եկե՛ք ուշադրություն դարձնենք անառակ որդու առակին: Ինչո՞ւ շնորհքի դռները բացվեցին անառակ որդու առաջ: Մեծ որդու առաջ նույնպես շնորհքի դուռը բաց էր, բայց ինչի՞ց է, որ անառակ որդին կարողացավ վայելել հոր սերն ու Նրա ունեցվածքը, իսկ մեծ եղբայրը՝ ոչ: Թվում է, թե պետք է հակառակը լիներ, չէ՞ որ նա հոր տան մեջ էր, իսկ անառակ որդին՝ դրսում: Այս երկու եղբայրների վիճակներն էլ կան եկեղեցիներում: Աստված ուզում է, որ մենք ոչ միայն իմանանք Աստծու մասին, այլև վայելենք Նրա սերը, չէ՞ որ Նա մեր Հայրն է: Հայրն ուրախանում է, երբ Իր տղաներն ու աղջիկները վայելում են Իր ունեցվածքը:

Անառակ որդու մեծ եղբայրն ասում էր, որ ինքը այդքան տարի ծառայեց հորը, բայց հայրը իրեն մի ուլ էլ չտվեց, որպեսզի ինքը իր բարեկամների հետ ուրախանա: Իսկ երբ անառակ որդին զղջաց ու եկավ հոր մոտ, շնորհքի դռները բացվեցին նրա առաջ, և չնայած նրան, որ հոր ամբողջ ունեցվածքը փչացրել էր, հայրը նրա համար պարարտ զվարակը մորթեց, առաջին պատմուճանը հագցրեց...

Անառակ որդին բժշկություն ստացավ հոր վերաբերմունքից: Մեծ եղբայրը բողոքում էր, որ հայրն իրեն մի ուլ էլ չի տվել: Մեկի համար այդ ուլը կարող է լինել բժշկությունը. ինքը երկար տարիներ աղոթում է, բայց չի բժշկվում, մեկի համար՝ երեխան, մյուսինը՝ մեկ այլ պրոբլեմ: Եվ հետաքրքիր է հոր պատասխանը ավագ որդուն:

Նա ասաց. «Որդի՛ս, չէ՞ որ ես ինչ որ ունեմ, քոնն է»: Սա սպառիչ պատասխան էր ավագ որդու համար: Սա նշանակում է, որ Աստված դռները չի փակել, Նրա դռները բաց են բոլոր մեղավորների առաջ, բայց դու չես օգտվում քո անհավատության պատճառով: Եվ մեծ եղբոր կյանքում ամենամեծ արգելքն այն էր, որ ինքը հաղորդ չէր իր հոր հետ: Մենք նույնպես աղոթում ենք, հավաքույթների գնում, մկրտվել ենք, եկեղեցու անդամ ենք, մասնակից ենք եկեղեցական կյանքին, բայց աստվածային կյանքին, հոր խոստումներին հաղորդ չենք: Եվ ո՞րն է արգելքը: Արգելքը մեր մարդկային արդարությունն է, որն Աստծու առաջ շատ զզվելի է: Հրեա ժողովուրդը կարծում էր, թե Տերը իրենց արդարության համար է տանում խոստացյալ երկիրը (Բ Օրինաց 9:4-5): Բայց դա բոլորովին էլ այդպես չէ: Աստծու Խոսքն ասում է. «Երբ քու Տէր Աստուածդ զանոնք քու առջևէդ հալածե, սրտիդ մէջ չըսես թէ Տէրը իմ արդարութեանս համար զիս այս երկիրը բերաւ, որպէս զի ժառանգեմ...»:

Ինչո՞ւ մեծ եղբայրը հաղորդ չէր եղել հոր ունեցվածքին, չէր վայելել: Ինչո՞ւ քրիստոնյան հաղորդ չէ Աստծու խոստումներին: Բուն արգելքը ավելի շատ ոչ թե նրա մեղքերն ու տկարություններն են, այլ նրա արդարությունը: Եբր.4:6-ում կարդում ենք. «Անոնք որ նախապէս աւետիսը առած էին, անհաւատութեան համար չը մտան»: Մեծ եղբայրը հոր հետ հաղորդ չէր, քանի որ նա առևտրական ու կրոնական հոգեբանությամբ էր ապրում հոր տանը: Նա ցույց էր տալիս իր գործերը, հոր տան մեջ իր վազելը, իր ծառայելը:

Սիրելինե՛ր, մարդը Աստծու հետ չի կարող օրենքի լեզվով խոսել: Աստծու հետ դու կարող ես շփվել ու հաղորդակցվել միայն հավատքի միջոցով: Ինչո՞ւ իսրայելցիները խոստումներին չհասան: Գրված է՝ իրենց անհավատության պատճառով: Տերն էլ նրանց անվանեց կամակոր ու խստապարանոց ժողովուրդ:

Սիրելինե՛ր, Ադամից ժառանգած սիրտը խաբեբա ու խիստ չար է (Երեմ.17:9): Տեր Հիսուսը այն նմանեցնում է փշի և ասում է, որ փուշը երբեք խաղող չի կարող տալ: Սակայն, ցավոք սրտի, այսօր շատ հավատացյալներ զբաղված են փուշ մշակելով, նրանք փորձում են լավացնել իրենց գործերը, որպեսզի հաղորդակցվեն հոր հետ, այսինքն՝ նրանք ամբողջ ջանքը դնում են, որպեսզի փուշը խաղող տա, որ բերեն Աստծու առաջ: Եվ սա ամենամեծ արգելքն է, որ թույլ չի տալիս, որպեսզի Աստծու Խոսքը գործի: Մեծ եղբայրն իր արդարությունն էր բերել հոր առաջ, բայց մեր մարդկային արդարությունը նման է այդ փշին, որ բարի պտուղ չի կարող տալ:

Սիրելի՛ս, եթե քեզ մոտ ոչինչ չի ստացվում, այսքան տարի դու մշակել ես փուշը, և այն խաղող չի տալիս, փառք տուր Տիրոջը դրա համար: Աստծու հետ հաղորդակցվելու ճանա-

պարհը միայն ու միայն հավատքով հանձնվելու ճանապարհն է: Մենք պետք է Աստծու հետ հարազատանանք ու մերժենք մեղքի հետ ունեցած մեր կապերը: Ինչպե՞ս եղավ, որ անառակ որդին ունեցավ հոր հաճությունը: Նա հոր ունեցվածքը փչացրել էր, բայց, անկախ այդ ամենից, եկավ ու հանձնվեց հորը: Նա ուներ բազում պրոբլեմներ, և ամենամեծ պրոբլեմն այն էր, որ սովամահ էր լինում: Բայց նա եկավ ու հանձնվեց իր հորը: Գուցե հիմա շատերն իրենց վերջին ճիգերն են գործածում հոր հաճությունն ունենալու համար: Հիշի՛ր, դու չես կարող Աստծու առաջ արդարանալ, ոչ էլ կարող ես Աստծուն հաճեցնել: Մի՛ փորձիր, չար ծառը բարի պտուղ չի կարող տալ: Բայց ո՞րն է մարդու կողմը, ո՞ը՝ քո, քո քայլը ո՞րն է: Անառակ որդին այդ բոլոր պրոբլեմների մեջ հորից գումար չուզեց, ուլ չուզեց, հաց չուզեց, այլ ասաց, որ հանձնվում է իր հորը: Նրա միակ փափագը հոր տանը լինելն էր, և դրա համար հանձնվեց հորը: Նա կատարեց իր ընտրությունը: Սիրելինե՛ր, սա հավատք է: Որդին խոստովանեց, որ միակ կյանքը հոր տան մեջ լինելն է: Չէ՞ որ նա ասաց, որ իր հոր տան մեջ շատ բանվորներ կան հացով կշտացած, իսկ հոր տնից դուրս լինել՝ կնշանակի սովամահ լինել: Եթե քեզ մոտ էլ այսօր հոգևոր կյանքը դեռ չի ստացվում, դու հանձնվի՛ր Տիրոջ շնորհքին, Տիրոջ խոստումներին: Միգուցե դու դեռ պարտված ես, դեռ հաղթություն չունես, դեռ բարի պտուղ չես տալիս, բայց դու ընտրել ես Հիսուսին, հավատում ես Աստծու խոսքին, որ կյանքը Հիսուսն է: Եթե դու խոստովանում ես, որ քեզնից հոգևոր մարդ դուրս չի գալիս, արի՛ հոր տուն, հայրը քեզ կընդունի, և դու կվայելես հոր տան մեջ լինելու մեծ ուրախությունը: Եվ ես համոզված եմ, որ այսպիսի մարդկանց համար բացվում են շնորհքի դռները: Եթե դու կորած ես կամ հոգևորապես մեռած, անառակ որդու նման արի՛ հորդ տուն, և կհագեցնես քո քաղցը:

Սիրելի՛ս, այսօր փրկության օր է, Տերը ուզում է, որ ամեն մի կորսված գառ գտնվի: Հարցն այն չէ, թե դու որքան մեղավոր ես, այլ՝ այն, թե դու հանձնվո՞ւմ ես Տիրոջը: Եվ եթե դու հանձնվում ես, Աստված Իր բոլոր խոստումները քո կյանքում կկատարի հրաշքներով ու նշաններով: Հանձնված ու հոգևոր բժշկված մարդը այս աշխարհում կյանք չի փնտրում: Եվ երբ դու հանձնվում ես Աստծու Խոսքին, արդեն ոչ թե պրոբլեմներն ես տեսնում, այլ Տիրոջը: Նա է Բարի Հովիվը, որ Իր կյանքը դրել է ոչխարների համար: Ուրեմն ոչ մի գայլ, ոչ մի

պրոբլեմ չի կարող կուլ տալ քեզ, ուրեմն ուրա՛խ եղիր ու փառք տուր Աստծուն: Փառք Տիրոջը: Պետք է միայն հանձնվել, և Աստծու խոստմունքները կկատարվեն քո կյանքում: Աստված Իսրայելին չասաց, թե՝ Ես քեզ հանում եմ Եգիպտոսի լծի տակից և տանում ուրիշ ծառայության լծի տակ, անգամ չասաց՝ Իմ ծառայության լծի տակ: Նա ասաց, որ տանում է խոստմունքները վայելելու: Աստված քեզ կանչել է, որդեգրել է, սատանայի իշխանության տակից քեզ հանել է, որ դու Իր խոստմունքները վայելես: Նա քեզ որպես Իր որդի է ընդունում: Փառք Տիրոջը: Եվ սրան պետք է հավատալ երեխայի պես: Միգուցե չենք հասկանում, բայց պետք է հավատանք:

Սիրելի՛ս, Տիրոջ հետ հաղորդ լինելու համար դու ջանք մի՛ արա, որ ինչ-որ բան սարքես և քո արդարությունով գնաս Տիրոջ առաջ, այլ անառակ որդու նման հավատա՛, որ քո հոր տանը բանվորները հացով կշտացած են, հանձնվի՛ր Նրա շնորհաց խոսքին և վայելի՛ր Նրա հետ լինելու անսահման ուրախությունը: Ամեն:

Վրեժ Սաֆոյան

ՄԵԿՏԵՂ ՀԱՎԱՔՎԵԼԸ ՄԻ՛ ՁԳԵՔ

Հոգևոր հավաքույթներին մասնակցելը կարելի է համարել քրիստոնյայի հոգևոր վիճակի բարոմետրը: Երբ հավատքը թուլանում է, ու Աստծու նկատմամբ սերն սկսում է մարել, միշտ էլ գտնվում են պատճառներ, որ հավատացյալը հավաքույթներին չմասնակցի:

Սա սատանայի ամենատարածված թակարդներից մեկն է, որն օգտագործվում է նրանց համար, ովքեր արդեն փրկվել են: Սատանան ուզում է նրանց գայթակղեցնել և զրկել աստվածային հովանավորությունից, խստացնել նրանց սրտերն՝ ուղղելով դեպի հպարտության և անկման ճանապարհը:

Մարդը միշտ էլ կարող է ինքն իրեն արդարացնել՝ Աստվածաշունչ կարդալ, աղոթել, բարեգործություն անել այն ժամանակ, երբ հավատացյալները միասին հավաքված են: Բայց ոչինչ չի կարող փոխարինել Սուրբ Հոգու օրհնությանը, որը դրսևորվում է միաբանության մեջ:

Անհրաժեշտ հոգևոր կերակուր ուտելու և հոգևորապես աճելու, Քրիստոսի մարմնի միաբանությունը ճանաչելու համար Աստված նախատեսել է տեղական եկեղեցիներ: Հավատացյալների համայնքում կատարելագործվում է մեր բնավորությունը, մենք սովորում ենք սիրել, ծառայել, ընդունել աջակ-

ցություն, հոգևորություն և, եթե կարիք կա, նաև հանդիմանություն:

Իհարկե, դուք կարող եք ընտրել ձեր սրտին հարմար վարդապետներ, ովքեր կշոյեն ձեզ, կարող եք ընտրել շփում այն անձանց հետ, ովքեր ձեզ երբեք չեն հակառակվի, սակայն այդ ժամանակ դուք կարող եք կորցնել ձեր կյանքի համար Աստծու նախատեսած ծրագիրը:

Զավակներ կան, ովքեր հրաժարվել են իրենց հայրերից, փոխել են իրենց անուն, ազգանունը, դարձել են ինչ-որ կուռքերի (երգիչ, դերասան, մոդել...) երկրպագուներ, սակայն նրանց չի հաջողվել փախչել իրենց սեփական անձից:

Որոշե՛ք երբեք չթողնել միասին հավաքվելը, որպեսզի Երկնային Հորը հնարավորություն տաք գործելու և ձեր կյանքը լցնելու լավագույնով:

Պյոտր Կովալենկո

ՎԵՐՋԻՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձությեան. վասնզի եթէ փորձուելով ընտիր գտնուի կեանքի պսակը կ'առնէ, այն որ Տէրը խոստացաւ իրան սիրողներին:

Հակոբոս 1:12

Հայրենական պատերազմն արդեն մոտենում էր ավարտին, գերագույն գլխավոր հրամանատարությունից հրաման էր իջեցվել բոլոր զորամասերին, որ ձերբակալեին բոլոր «աղանդավորներին»: Միայն մեր զորամասից հավաքեցին երեսուն հավատացյալի:

Զինված պահակազորի հսկողության տակ մեզ լցրին բեռնատարներն ու տարան անորոշ ուղղությամբ: Մի դաշտի մեջ մեզ իջեցրին բեռնատարներից և հրամայեցին մի ընդհանուր գերեզմանափոս փորել բոլորիս համար: Փոսը փորելուց հետո մեզ շարեցին փոսի եզրին, որից հետո ավագը դիմեց մեզ.

- Ձեր կյանքը փրկելու մի վերջին հնարավորություն է տրվում ձեզ: Ով ցանկանում է ողջ մնալ, թող մի քայլ առաջ գա ու հրապարակայնորեն հրաժարվի Քրիստոսից: Իսկ ով չի հրաժարվի, մի րոպե հետո կգնդակահարվի:

Ձերբակալվածներից ոմանց դեմքի գույները փոխվեցին: Պարզ էր, որ նրանք տատանվում են: Հետո մեկը մյուսի ետևից, համարյա հավատացյալների կեսը, մի քայլ առաջ եկան և հայտարարեցին, որ իրենք հրաժար-

վում են Քրիստոսից: Ավագը գոհունակ քմծիծաղով դիմեց շարքում մնացածներին.

- Դո՞ւք ինչու եք դանդաղում, մի՞թե պատրաստվում եք մեռնել: Հիմար մի՛ եղեք, միացե՛ք ձեր ուրացած եղբայրներին:

- Նրանք արդեն մեր եղբայրները չեն,- տխուր ասաց ձերբակալվածներից մեկը:

- Լռությո՛ւն շարքում...- զայրացած հրամայեց ավագը և տեսնելով, որ հավատացյալները տեղից չեն շարժվում, ավելացրեց.- դե՛, ինչպես կցանկանաք,- ապա, դիմելով Քրիստոսին մերժողներին, ասաց,- իսկ դուք, աղավնյակնե՛րս, հիմա գործով կապացուցեք ձեր խոսքերը:

Ավագը նշան արեց զինորներից մեկին, և նա զենքեր բաժանեց ուրացողներին:

- Հիմա, իմ հրամանով, դուք պետք է գնդակահարեք ձեր նախկին եղբայրներին:

Հնչեց հրամանը, և բոլոր հավատուրացները սեղմեցին ձգանները, սակայն, ի զարմանս նրանց, զենքերը լիցքավորված չէին: Մի քանի վայրկյան քար լռություն էր տիրում, ապա ավագը հրամայեց ուրացյալներից վերցնել զենքերը և բարձրաձայն հայտարարեց.

- Այո՛, դուք գործով ապացուցեցիք ձեր դավաճան լինելը: Սակայն այս փոսում կլինեն ոչ թե ձեր ընկերների դիերը, այլ ձեր:

- Ներեք մեզ...

Հավատքը չուրացողներից մեկը ցավով պատասխանեց.

- Մենք ձեզ հենց սկզբից ենք ներել: Դուք շտապեք Աստծու առաջ զղջալ:

Նրանք վախեցած մի հայացք գցեցին դեպի պահակազորը և սկսեցին աղոթք մրմնջալ, սակայն այդ պահին հրաման հնչեց՝ շարվել փոսի եզրին... մի քանի վայրկյան հետո նրանց գնդակահարեցին:

Չուրացած հավատացյալներիս վերադարձրեցին իրենց զորամասերը, որտեղից էլ մենք զորացրվեցինք ու վերադարձանք մեր տները: Հետագայում իմացանք, որ հրամայված էր եղել բացահայտել հաստատուն հավատացյալներին և ազատ արձակել, իսկ կեղծավորներին՝ գնդակահարել:

«Բնաւ մի վախնար այն բաներից, որ կրելու ես... հաւատարիմ եղիր մինչեւ ի մահ, եւ կեանքի պսակը կ'տամ քեզ» (Հայտ.2:10):

Պ.Զագարույկո
«Նաշի դնի », թ. 2128

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Պերճ եղբոր վկայությունը

Ուզում եմ վկայել կնոջս բժշկության մասին, որ կատարվեց 1998թ.: Կնոջս ոտնաթաթը վնասվել էր երիտասարդ տարիքում, ինչը պատճառ էր դարձել, որ ոտքի մեջ սկսել էր ջուր հավաքվել: Նրա ոտքի վրայով անընդհատ ջուր էր հոսում, ոտքն անդադար ցավում էր, օրական մի քանի ցավազրկող էր խմում: Այդ վիճակը շարունակվում էր արդեն ինը տարի: Իններորդ տարվա մեջ մի օր մեզ զանգեց մեր Երան քույրիկը, որ նույնպես հիվանդ էր, երիկամներից մեկը հեռացված էր (նա արդեն ննջել է): Ասաց, որ իրենց տարածքում կիրակի երեկոյան աղոթելու են հիվանդների համար և յուղով են օծելու: Մեքենայով գնացինք, Երան քույրիկին վերցրինք ու գնացինք իրենց ժողովարան: Նա մեզ ներկայացրեց եղբայրներին, չնայած որ եղբայրները մեզ վաղուց ճանաչում էին, երիտասարդ ժամանակ միասին ծառայել էինք: Եղբայրն ասաց. «Կներե՛ք, բայց ես չեմ կարող ձեզ յուղով օծել, քանի որ մեր խմբից չեք, և ձեր հոգևոր վիճակից տեղյակ չեմ»: Մենք չտխրեցինք, նստեցինք վերջում և սպասում էինք, որ օծման արարողությունը վերջանա: Մեր Երան քույրիկը, որ արդեն օծվել էր, մոտեցավ և ասաց. «Ոչինչ, որ եղբայրը քեզ յուղով չօծեց, Մարե՛տ քույրիկ,- ձեռքը տարավ դեպի իր ճակատը, յուղից վերցրեց ու բերեց քսեց կնոջս ճակատին,- ա՛ռ, քեզ եմ տալիս այս օծությունը»: Շատ հետաքրքիր պահ էր...

Եկանք տուն, քնեցինք: Կինս արթնացրեց ինձ սովորականից շուտ. «Պե՛րճ, արթնացի՛ր, տե՛ս՝ ոտքիս այտուցը չկա»: Մինչ այդ ինքը տնից դուրս էր գալիս հողաթափով, այն էլ՝ վերևի հատվածը կտրած, որպեսզի ոտքը մեջը մտներ: Գնաց բերեց իր երիտասարդ տարիքի բարձրակրունկ կոշիկները, որ մինչ այդ չէր հագել, հագավ ու ասաց. «Տե՛ս, չի ցավում, ոտքս նորմալ մտնում է»:

Աստված մի գիշերվա մեջ հրաշք կատարեց, բայց այդ վիճակը տևել էր ինը տարի: Մենք չգիտեինք ինչն է պատճառը, բայց հրաշքը կատարվեց. յուղով օծությունը մեծ հրաշքներ է գործում:

Երբ գնացի Կիև, այնտեղի Պավել եղբայրն ասաց՝ վկայի՛ր, թե ինչպես եղավ բժշկությունը: Երբ ես վկայեցի վերջացրի, Պավել եղբոր կինն ասաց. «Ես էլ ունեմ վկայություն, որի մասին մինչ օրս չեմ խոսել»: Նա պատմեց, որ

ունեցել է կանացի խնդիրներ, և ախտորոշումը ոչ մի լավ բան չի խոստացել: Քույրիկը մոտեցել է իրենց Աղամ եղբորը և ասել. «Եղբա՛յր, աղոթի՛ր ինձ համար և յուղով օծիր, որպեսզի գնամ վիրահատության»: Աղոթքից հետո, երբ գնում է վիրահատության համար անհրաժեշտ ստուգումներն անցնելու, բժիշկը նայում է նախորդ և ներկա տվյալներին ու շփոթվում: Քույրիկի հարցմանն ի պատասխան ասում է. «Չեմ հասկանում, սրանք քո՞ նկարներն են, թե՞ ոչ: Այստեղ ես տեսնում եմ միայն երկու փոքր կետ: Ի՞նչ եք արել»: Քույրը պատասխանում է, որ գալուց առաջ խնդրել է ավագ եղբորը, որ իր համար աղոթի ու յուղով օծի»: Բժիշկն ասում է. «Դե հիմա գնա՛ ու եղբորդ ասա՛, որ աղոթի՝ այդ երկու փոքր կետերն էլ (ուռուցքները) վերանան: Հաջորդ երկուշաբթի քույրն Աղամ եղբորն ասում է, որ Աստված հրաշք է արել ու խնդրում է աղոթել, որ այդ փոքրացած ուռուցքներն էլ վերանան: Հաջորդ հետազոտության ժամանակ արդեն դրանք էլ չկային:

Փառք Տիրոջը այս ամենի համար:

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

«Տէրը խնդրեցի, ու ինձի պատասխան տուաւ, և իմ ամէն երկիւղներէս զիս փրկեց»:
Սաղմոս 34:4

Իր մեծ ողորմության համեմատ Աստված փրկել էր ամուսնուս՝ Պյոտրին, հեռացրել քաղցկեղի ուռուցքը՝ տալով նրան կյանք և առողջություն:

Այդ օրվանից անցել էր ութ տարի: Այդ տարիների ընթացքում նա չէր խմել ոչ մի հաբ և չէր ընդունել որևէ ներարկում: Տարին երկու անգամ գնում էր ստուգման այն պրոֆեսորի մոտ, որը նրան 1998 թվականին վիրահատել էր:

Ուռուցն ինքն իրեն անհետացավ: Ամեն բան հրաշալի էր, բացի մի շատ կարևոր բանից: Պյոտրն այդպես էլ չէր ապաշխարում՝ Տիրոջը շնորհակալ չլինելով իր հրաշալի բժշկության համար: Չեմ ասի, որ նա բացարձակ անհավատ էր. հոգու խորքում ինչ-որ տեղ նա հավատում էր Աստծու գոյությանը, սակայն քայլ չէր անում դեպի Տերը:

Նրան ինձ հետ հավաքույթների տանելու իմ բոլոր փորձերն ապարդյուն էին անցնում. նա կա՛մ կատաղությամբ համառում էր, կա՛մ էլ ուղղակի լռում էր: Ուժով ոչ մեկին Աստծուն չես բերի, սակայն ես

անընդհատ աղոթում էի ու խնդրում Տիրոջը հրաշք գործել:

Աստված Իր միջոցներն ունի այդպիսի խստապարանոցների համար... Ամեն անգամ, նախքան պրոֆեսորին այցելելը, նա պետք է պարտադիր ուլտրաձայնային հետազոտություն անցներ: Ամեն անգամ էլ պատասխանը դրական էր լինում. «Ամեն բան շատ լավ է»: Սակայն այս անգամվա հետազոտության արդյունքը մեզ ուղղակի ցնցեց. լյարդի վրա երեք նորագոյացություն հայտնաբերեցին: Ավելի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո բժիշկ-ուռուցքաբանը հույսի ոչ մի նշույլ չթողեց մեզ. «Կապրի ամենաշատը վեց ամիս, սրանք մետաստազներն են, ուռուցքն ավելի մեծ է»: Բժշկի մոտից դուրս եկա և հենց կլինիկայի միջանցքում ծնկի գալով՝ արցունքներով խնդրեցի Տիրոջս մեծ ողորմություն անել ու պահպանել ամուսնուս կյանքը: Ջերմեռանդ աղոթքներ էին երկինք բարձրանում: Պյոտրի բժշկության համար աղոթում էի թե ես, թե մեր եկեղեցին, թե մեր ծանոթներն ու բարեկամները: Նրան ինձ հետ աղոթքի առաջնորդելու իմ բոլոր փորձերը ձախողվում էին:

Նա ևս մի քանի հետազոտություն անցավ, որոնք ուղղակի հաստատեցին մետաստազների առկայությունը: Ես հանդիպեցի վիրաբույժին, որպեսզի քննարկեմ վիրահատության պայմանները, սակայն դա էլ չստացվեց, քանի որ Պյոտրը շաքարախտով հիվանդ էր:

Մի հինգշաբթի պատրաստվում էի հավաքույթի գնալ: Ուղղակի, չակնկալելով դրական պատասխան, ամուսնուս առաջարկեցի ինձ հետ գալ: Պյոտրն անսպասելիորեն համաձայնեց:

Այդ օրը եղբայրը խոսում էր այն մասին, որ մենք մեր զավակներին կատարած չարության համար հաճախ անկյուն ենք կանգնեցնում՝ սպասելով, որ ուր որ է կհասկանա ու ներողություն կխնդրի, իսկ նրանք համառորեն լռում են: «Այդպես էլ մեզնից շատերը իրենց կատարած մեղքերի համար կանգնած են անկյունում և չեն ուզում Տիրոջից ներողություն խնդրել: Հնարավոր է, որ հենց այս պահին էլ ձեզնից մեկը կանգնած է անկյունում: Ձեռք բարձրացրեք, զղջացե՛ք»: Ոտքի կանգնեց Պյոտրը, նրա հետ ոտքի ելավ մեր ողջ եկեղեցին: Պյոտրը զղջաց: Նորից ես հեկեկում էի, բայց այս անգամ դրանք ուրախության արցունքներ էին:

Հաջորդ օրը եկեղեցու բոլոր անդամներով էքսկուրսիա գնացինք Նազարեթ: Մենք քրիստոնեական կենտրոնում աղթում էինք, երբ ինձ կարծես մեկը ստիպեր բացել աչքերս. Պյոտրն ամբողջ մարմնով ցնցվում էր ու կամաց-կամաց գետնին ընկավ՝ բերանը ձկան նման բացուխուփ

անելով: Բոլորը խուճապի մեջ էին, հատկապես ես, որովհետև մտածում էի, որ բժիշկների ասած մեկ ու կես ամիսն արդեն վերջացավ, և ամուսինս մահանում է:

Սակայն Աստված մեծ է: Մի քանի րոպե հետո ամուսինս արդեն լավ էր: Հետո նա ինձ պատմեց, թե ինչպես աղոթքի ժամանակ նրա ափի մեջ է խրվում ինչ-որ շատ սուր և շատ այրող բան: Այդ կրակը նրա ոտքի մատներից մինչև գլխի մազերի ծայրերը տարածվում է. «Ներսումս կարծես բորբոքված կրակ էր վառվում, ուժերս ինձ լքեցին: Միայն մի որոշ ժամանակ անց ես ուշքի եկա»:

Հաջորդ օրը մենք պետք է գնայինք լյարդի հատուկ հետազոտություն անցնելու, որը պետք է ցույց տար, թե ինչ խորությամբ են տարածված մետաստազները:

Հետազոտության արդյունքն ինձ նորից շոկի մեջ գցեց: Պատասխանը բաղկացած էր երկու բառից. «Լյարդը մաքուր է»: Պատասխանն ապշեցրեց ոչ միայն ինձ, այլ նաև ամուսնուս բուժող բժշկին, որը կարճ ասաց. «Ես 28 տարվա ուռուցքաբան եմ և մի բան կարող եմ ասել. սա հնարավոր բան չէ: Հնարավոր չէ, որ լյարդի վրայի մետաստազներն իրենք իրենց անցնեն: Մարդը դատապարտված է, այլընտրանք չկա»:

«Կա՛ այլընտրանք,- հակառակվեցի ես,- այդ այլընտրանքն Աստծու մոտ է»:

Բժիշկն ուշադիր լսեց ինձ և առաջարկեց իր բոլոր անհույս հիվանդներին վաղը տանել այդ վայր: Ես ժպտացի նրա միամտության վրա և բացատրեցի, որ Աստված Իր մեծ ողորմության համեմատ է բուժում մարդկանց: Այդ հարցում ո՛չ մեր հարստությունը կօգնի, ո՛չ հավատավորությունը, ո՛չ էլ գտնվելու վայրը: Փառք Տիրոջը դրա համար: Այդ օրվանից անցել են տարիներ: Ես միշտ վկայում եմ այդ հրաշքի մասին: Ոմանք հավատում են, ոմանք՝ արհամարհում, ոմանք էլ՝ ծաղրում, սակայն ես չեմ վիրավորվում, որովհետև գիտեմ ճշմարտությունը: Հիմա ես ու ամուսինս միասին ենք գնում հավաքույթների և միասին փառաբանում Աստծուն:

Լյուդմիլա Ռիբակ, Իսրայել

ՄՈՐ ԱՂՈԹՔԸ ՓՐԿԵԼ Է ՄԻ ՈՂՋ ՔԱՂԱՔ

Յուրաքանչյուր քրիստոնյա կարող է վկայել, թե ինչպես է երկինքը բազում անգամներ արձագանքել իր աղոթքին: Օրինակ՝ մայրերի աղոթքների միջոցով փոխվում է նրանց անհավատ զավակների մտածելակերպն ու վարքը, և նրանք դառնում են նվիրված հավատացյալներ:

Աստված արձագանքում է ոչ միայն հոգևոր, այլ նաև մարմնավոր կարիքներից ծնված խնդրանքներին:

Մի անգամ իմ ընկեր Միխայիլ Գերիչի հետ զրուցում էինք այն մասին, թե ինչպես Աստված պատասխանեց մեր եկեղեցու արթնության համար աղոթքախմբի շաբաթօրյա աղոթքներին: Այդ ժամանակ Միխայիլը հիշեց, թե ինչպես 1975թ. իր մոր աղոթքով փրկվել է ոչ միայն ինքը, այլ նաև ողջ Սևաստոպոլ քաղաքը: Այդ տարի նա զորակոչվել է ծառայելու սևծովյան ռազմածովային ուժերում: Նրա ծառայությունն անցել է այդ ժամանակվա ամենաարդիական՝ զինված «Գռոզնի» հածանավի վրա, որի կայանատեղին Սևաստոպոլ քաղաքն էր: Հածանավն ունեցել է ատոմային գլխիկով չորս հրթիռ: Երբ հածանավը կանգնած է լինում Սևաստոպոլի նավամատույցում, ինչ-որ մեկի սխալի թե անփութության պատճառով հրթիռներից մեկն ստանում է «Ստարտ» հրահանգը: Անմիջապես միանում է հրթիռի ռեակտիվ շարժիչը:

Պատկերացրեք իրավիճակը. ատոմային զենքով բեռնված զինվորական նավը կանգնած է քաղաքի նավամատույցում, և նրա վրա սարսափելի աղմուկով կրակի բոց է դուրս գալիս այն հատվածից, որտեղ պահվում են ատոմային հրթիռները: Այս մահացու բեմականացումը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև այրվում- վերջանում է հրթիռի ողջ վառելանյութը: Իսկ եթե հանկարծ...

Այդ օրը, Սևաստոպոլից շատ հեռու, Սուրբ Հոգին մի կնոջ աղոթքի է մղում:

Նա անմիջապես սկսում է աղոթել իր որդու համար, որը ծառայությունն անցկացնում էր զինվորական հածանավի վրա: Նա այնքան ջերմեռանդ է աղոթում, ինչպես չէր աղոթել երբևէ: Հոգին տնքում է, և աղոթքի բառերը

գետի նման հոսում են նրա շուրթերից: Նա չի իմանում, թե որտեղ և ինչ է կատարվում, սակայն վստահելով Սուրբ Հոգուն՝ շարունակում է աղոթել: Հետո նա նշում է օրն ու ժամը, թե երբ դա տեղի ունեցավ, և որդուն գրած նամակում նշում է այդ մասին:

Երբ Միխայիլը համեմատում է մոր գրած օրն ու ժամը և նավի վրա տեղի ունեցած դեպքի օրն ու ժամը՝ ապշում է, որովհետև այդ ամենը համընկնում էին ոչ միայն օրով, այլ նաև րոպեներով:

Սևաստոպոլում այդպես էլ չիմացան, թե նրա բնակիչներն ինչ մահացու վտանգից էին ազատվել, և թե ինչպես մի կնոջ աղոթքը պաշտպանել ու փրկել էր քաղաքը: Այդպես Աստված Իր մի զավակի կյանքը փրկելու համար փրկեց ողջ քաղաքը:

Աղոթքն իզուր չի լինում: Աղոթքն ավելորդ չի լինում: Եթե Սուրբ Հոգին դրդում է աղոթքի, թողե՛ք ձեր բոլոր գործերը և անմիջապես սկսե՛ք աղոթել, Աստված կուղղորդի ձեր աղոթքը: Անտարբեր մի՛ եղեք Սուրբ Հոգու ձայնին: Աղոթե՛ք հենց նույն պահին, որովհետև ինչ-որ մեկը հաստատ ունի ձեր բարեխոսության, օգնության և միջնորդության կարիքը:

Միխայիլ Ռոմանովիչ

ԻՄԱՍՏՈՒՆ ԾԵՐՈՒՆԻՆ

Գյուղերից մեկում մի ծերունի էր ապրում: Նա շատ աղքատ էր, սակայն նրան նույնիսկ թագավորներն էին նախանձում, քանի որ ուներ մի հրաշալի սպիտակ նժույգ: Շատերն էին ուզում գնել այդ ձին և ծերունուն ահռելի գումարներ էին առաջարկում, բայց նա առարկում էր. «Այս ձին ինձ համար սոսկ ձի չէ, ինչպե՞ս կարող եմ վաճառել նրան»:

Եվ այդպես էլ այդ աղքատ ծերունին չէր համաձայնում վաճառել իր ձին: Մի առավոտ նա նկատեց, որ ձին մսուրում չէ: Հավաքվեց ամբողջ գյուղը, և բոլորը քննադատեցին ծերունուն: «Դու հիմար ես, – ասում էին նրան,– մենք գիտեինք, որ քո ձին գողանալու են մի օր: Լավ չէ՞ր լինի, որ վաճառեիր»:

Ծերունին պատասխանեց. «Ես չգիտեմ այդ ամբողջ պատմությունը: Տեղյակ չեմ՝ ձի՞ն է հեռացել, թե՞ գողացել-տարել են նրան: Կա փաստ, իսկ մնացածը ենթադրություն է: Արդյոք սա դժբախտությո՞ւն է, թե՞ օրհնություն՝ չգիտեմ, որովհետև սա միայն իրողության մի մասն է: Եվ ո՞վ գիտե, թե ինչ կլինի սրանից հետո»:

Գյուղացիները ծիծաղեցին նրա վրա: Նրանք գիտեին, որ ծերունին տարօրինակ դատողություն ունի: Տասնհինգ օր անց ձին անսպասելիորեն հետ եկավ՝ իր հետ բերելով չորս քուռակ: Գյուղացիները նորից հավաքվեցին ու ասացին. «Դու ճիշտ էիր, ծերունի՛: Դա դժբախտություն չէր, այլ օրհնություն»: Եվ ծերունին կրկին պատասխանեց

նրանց. «Ես ամբողջ պատմությանը տեղյակ չեմ: Գիտեմ, որ ձին չկար, բայց հետո նա հետ կավ: Ո՞վ գիտե՝ սա օրհնությո՞ւն է, թե՞ ոչ: Եթե դուք միայն նախադասության մի բառն եք ընթերցել, ինչպե՞ս կարող եք պատկերացում կազմել ամբողջ գրքի վերաբերյալ: Սակայն մարդիկ այնուամենայնիվ կարծում էին, թե ծերունին սխալ է, չէ՞ որ ավելի շատ ձի ունի հիմա:

Ծերունին միանուագար որդի ուներ: Որդին սկսեց քշել այդ քուռակներին և մի շաբաթ անց ընկավ ու ջարդեց ոտքը: Եվ գյուղացիները նորից ասացին նրան. «Ինչպիսի՜ դժբախտություն: Քո միանուագար զավակը զրկվեց քայլելու հնարավորությունից, չէ՞ որ նա քո միակ հենարանն էր: Լավ չէ՞ր լինի, որ ձին վաճառեիր, գոնե գումար կունենայիր»: Եվ ծերունին կրկին պատասխանեց նրանց. «Դուք սխալ ենթադրություններ եք անում: Մի՛ գնացեք այդքան հեռու: Ես միայն գիտեմ, որ որդիս ընկել ու ջարդել է ոտքը: Ոչ ոք չգիտի՝ դա դժբախտությո՞ւն է, թե՞ օրհնություն»:

Այնպես պատահեց, որ մի քանի շաբաթ անց պատերազմ սկսվեց այդ երկրում, և ողջ երիտասարդությունը տարվեց բանակ: Միայն ծերունու որդին կենդանի մնաց, քանի որ հաշմանդամ էր: Բոլորը լացուկոծի մեջ էին, որովհետև պատերազմում երկիրը պարտություն էր կրել, և շատ երիտասարդներ զոհվել էին: Ժողովուրդը եկավ ծերունու մոտ և ասաց. «Դու ճիշտ էիր, պարզվեց, որ այդ օրհնություն էր ձեզ համար, որովհետև, թեպետ քո որդին հաշմանդամ է, բայց քեզ մոտ է, իսկ մեր որդիներն այլևս չեն վերադառնալու»: Ու կրկին ծերունին ասաց. «Դուք շարունակում եք դատել ու ենթադրություններ անել: Ես չգիտեմ ամբողջ պատմությունը, և ոչ ոք չգիտի»:

Դատողություն կամ եզրահանգում անելը մտքի սառած, կանգ առած վիճակ է: Մի՛ դատեք, այլապես դուք երբեք չեք կարող բոլորի հետ մեկ ամբողջություն լինել: Իրականության մեջ ճանապարհորդությունը երբեք չի ավարտվում: Մի մասն ավարտվում է, իսկ մյուսը՝ սկսվում, մի դուռը փակվում է, մյուսը՝ բացվում: Դուք հասնում եք գագաթին, բայց հայտնվում է մի այլ՝ ավելի բարձր գագաթ:

Կյանքը անվերջանալի ճանապարհորդություն է: Հանձնենք մեր ճանապարհն Ատծուն և փնտրենք Նրա առաջնորդությունը: Դավիթ մարգարեն ասում է. «Առավոտը լսել տուր ինձ Քո ողորմությունը, որ Քեզ եմ հուսացել. ինձ ցույց տուր այն ճանապարհը, որ պիտի գնամ նրանում, որովհետև դեպի Քեզ եմ բարձրացնում իմ անձը (Սաղմ. 143:8):

ՀԻՍՈՒՍԻ ԱՉՔԵՐԸ

Գարնանային արևի նման՝
Ի՜նչ ջերմ են աչքերը Հիսուսի,
Կապույտակ երկնքի նման՝
Ի՜նչ պարզ են աչքերը Հիսուսի:

Սիրո մի իորը, անչափելի
Օվկիանոս են աչքերը Հիսուսի,
Եվ որքան նրա մեջ դու սուզվում ես՝
Անհատակ են աչքերը Հիսուսի:

Մեր սրտի դռներն ենք երբ բացում,
Ժպտում են աչքերը Հիսուսի,
Իր ուրքերին ենք երբ փարվում,
Հրճվում են աչքերը Հիսուսի:

Մեղավորին միշտ ապաստ
Հանձնող են աչքերը Հիսուսի,
Սիալները անվերջ ներող,
Բազումողորմ են աչքերը Հիսուսի:

Ցավերի մեջ դատապա՞ծ ես,
Բուժո՛ւմ կա աչքերում Հիսուսի,
Թե մեղքերի մեջ մեռած ես,
Ներո՛ւմ կա աչքերում Հիսուսի:

Բռնած ճամփից երբ շեղվում ես,
Կանչում են աչքերը Հիսուսի,
Երբ թողնում ու հեռանում ես,
Սրտաբվում են... աչքերը Հիսուսի:

Թե կարծում ես մերժված ես դու,
Քեզ հետ են աչքերը Հիսուսի,
Թե թշնամից լքված ես դու,
Քեզ փնտրի՛ր աչքերում Հիսուսի:

Ամեն անգամ նեղության մեջ
Միշտ հույս են աչքերը Հիսուսի,
Եվ դրդմության իսավարի մեջ
Քեզ լույս են աչքերը Հիսուսի:

Սիրով լեցուն սիրո կանչ կա,
Հրավեր կա աչքերում Հիսուսի,
Մի՛ հապաղիր, փրկություն կա
Քեզ համար աչքերում Հիսուսի:

ՎՐԴՈՎՎԱ՞Ծ ԵՍ

Խաղաղություն կը թողում ձեզի, ոչ թէ ինչպէս աշխարհս կու տայ՝ ես ձեզի կու տամ. սիրտերնիդ չխռովի ու չվախնայ:

Հովհ.14:27

Այս բաները ձեզի խօսեցայ, որպէս զի ինծմով խաղաղութիւն ունենաք. աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք. բայց քաջասիրտ եղէք, ես աշխարհի յաղթեցի:

Հովհ. 16:33

Բանի մը համար հոգ մի ընէք. հապա ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով, գոհութիւնով մէկտեղ, ձեր խնդրուածքը Աստուծոյ յայտնի ըլլայ: Եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն միտքէ վեր է, ձեր սիրտերը ու միտքերը Քրիստոս Յիսուսով պիտի պահպանէ:

Փիլիպեցիս 4:6-7

Քու օրէնքդ սիրողներուն շատ խաղաղութիւն կայ, ու անոնց գայթակղութիւն չըլլար:

Սաղմոս 119:165

Ուստի մենք հաւատքով արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով:

Հռովմեացիս 5:1

Աստուծոյ խաղաղութիւնը ձեր սիրտերուն մէջ թագավորէ, որու դուք կանչուեցաք մէկ մարմինով. ու գոհացող եղէք:

Կողոսացիս 3:15

Վասն զի մարմնաւոր խորհուրդը մահ է, և հոգևոր խորհուրդը կեանք ու խաղաղութիւն:

Հռովմեացիս 8:6

www.barilur.org
bari_lur_09@rambler.ru